ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 օգոստոսի 2026թ. թիվ 600-Ա

Ա.ԹՈՐՈՍՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԾՆՈՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» N 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2026 թվականի օգոստոսի 5-ի թիվ 597-Ա որոշումը և հաշվի առնելով Ա.Թորոսյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմինե Մկրտչի Թորոսյանին 2026 թվականի օգոստոսի 6-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող՝ մինչև օրենքով սահմանված կարգով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի նշանակումը:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարման համար Ա.Թորոսյանին տալ լրավճար «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի հաստատված աշխատավարձի 30%-ի չափով:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-08-05 16:17:24 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. օգոստոսի 5
ք.Վանաձոր